ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ ԺԲ. 1869 ԱՊՐԻԼ

ԿՐՕՆԱԿԱՆ

Ի մեծի սուրբ Ցայսմուրեաց Տիրոջոսի վերնատունի բանին եսայեայ յես որոյ եւ հաւատմունք ապստամբասուցք բանից բարձման յաւրինեալի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, առագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւնեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն.

(Շարունակութիւն)

Ահա՝ ես՝ որ ոչ արմատ միայն՝ այլ և Աբարիչեր, յարմատոյ անտի Յեսսեայ բխեաց գաւազան մարմնով ծնեալ ի կուսէն անախտաբար: Եւ բարիք զՅեսուէ բերի ի մէջ զաննշանն և ոչ զնշանաւորն զԱբելիճ: Ես և Աբեթաբանիչք նոյնպէս առնեն, զի ցուցցեն

թէ՝ ոչ յումեքէ գարշեցաւ Տէրն հարտարակաց: Եւ զմարմին բանին գաւազան կոչէ, զքաղաւորութիւն և զկովուական առաջնորդութիւն յայտ առնելով. զի գաւազան ի հեռու, ունին քահանայք և հովիւք. ըստ այնմ և այլ մարգարէքն խօսին զնոյն խորհուրդ

մարդեղութեան Բանին։ Ըստ որում Պաւղոս "գաւազան զաւրութեան ա- ռաքեսցէ քեզ Տէր, ասէ, ի Սիոնէ". և թէ "ցուպ քո և գաւազան մխիթա- րեսցէ զիս". և ինքն Բանն դնելով զանձն իւր ի չարչարանս խաչին ասէր ի ձեռն Ովսեաբիայ, թէ "ընկեցի զգա- ւազանն իմ զգեղեցիկ՝ ցրել զուխտ իմ ի մէջ Յուդայ և Իսրայէլի". զի ուղ- ղեաց մեզ դատաստանս և իրաւունս ընդ թշնամին կենաց և փրկութեան մե- րոյ։ Հաստուցանելով նոցին նեղու- թիւն, և մեզ զհանգիստն անվախճան։ Իբրև զթագաւոր՝ որոյ "աթոռն յաւի- տեանս յաւիտենից, գաւազան ուղղու- թեան գոլով, գաւազան թագաւորու- թեան նորա"։ Նա հովուեաց զմեզ արա- ծելով ի վայրս փափկութեան և ի ջուր հանգստեան. այլ և ցուպ յարուցիչ բնութեանս։ Նա այսոքիկ անուանք ընդ մարմնոյն միաւորութեան ասեն ի վերայ նորա։ Նա մարմնոյն ասելով՝ ոչ թէ բա- ժանեմ զբանն ի մարմնոյն, այլ պատ- ճառս տամ զարժանն իմանալ։ Բանզի և ինքն իսկ Հայրականն իւր ծնունդ յայտնաբանէ, և ընդ նմին և զառ ի կուսական իւր ծննդենէ ասէ, այսպէս բարբառեալ ի բերանոյն Պաւղոսի, "տէր իմ հայր իմ ասաց ցիս, որդի իմ ես դու" ծնեալ յիմմէ բնութենէ և յհոգութենէ անժամանակ և անախտաբար, անմայր ի յերկինս անսկզբնաբար. և ես յայսաւր ժամանակի վասն փրկու- թեան մարդկան ծնայ զքեզ ի կոյս մայ- րէ՝ անհայր ի յերկրի". և այլ ուր թէ "յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ". և թէ "դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի"։ Նա զայս- պիսի սքանչելեաւք ծնունդ նորին լսե- լով ի կուսէ՝ և անախտաբար իբր յար- մատոյ։ Նա ծնեալն Աստուած, և ծը- նաւղն միշտ կոյս, մի՛ տկարագոյս ինչ մտածեսցես՝ անհնարին զնոյն կարծելով. զի վասն այնորիկ այս ահաւոր խորհուրդ յառաջագոյն աւրինակաւք յայտնեցաւ, զի ի կատարումն եկեալ քեզ դիւրըն- կալ առ ի հաւատ եղիցին. և մի ի բնու- թես քան հայելով՝ անկարելի զերան վար- կանիցիս։ Յաղագս որոյ պարտիս զմտաւ ածել, զի Տէրն բնութեան էր՝ որ զայս ներգործեաց. որում և ամենայն բնութեան գործք ի ներքոյ անկեալ ան- սան նորին հրամանի, որպէս հուրն՝ ցաւղ (ցօղ) առ երեք մանկունսն, և ջուրն՝ արիւն առ Եգիպտացիսն։ Նա հրով վա- ռեալ մուրենին անկեզ առ Մովսէսիւ, և նշան գեղմանն առ Պետրոն։ Նա վէմն աղբիւրացեալ առ իսրայելիս, և Յորդանան ի վեր դարձեալ, և ծովն բաժանեալ. և գաւս (գօս) գաւազանն դալարացեալ։ Նա Յառայ և այլ ևս ամուլք ծնեալք. և Յորդանանաւ Ներ- ման սրբեալ. և ծանրութիւն տապա- լոյն թեթևութեամբ փայտին ի նմանէ Եղիսէիս վերաբերեալ։ Նա ջուրքն Երիքովի բժշկեալ, և ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ, և այլ ևս յո- լովագոյնք ի նախնումն ի վեր քան

զընուԹիւն հրաշագործեալ, զմերս փըր-
կուԹեան խորհուրդ լուսաւորագոյնս
նշանակեալ։ Ա՛ն որոյ առանձին յայ-
լոցն տեսցուք զԱսիայիա ԹԷ զի՞նչ ար-
դեաւք կոչիցէ զմարմնաւորականն գա-
լուստ. ”Նա՛ եկեղ ասէ ծաղիկ յարմա-
տոյ անտի”։ Նա այսու զաճումն յայտ
առնէ. զի եկեղն և վերասցին՝ զառ սա-
կաւ սակաւ զաճումն յայտ առնէ, և
ոչ երբէք Թարշամեսցի ծաղիկ գաւազա-
նին։ Նա ծաղիկն զայլագունակ կերպա-
րանս նշանակէ զնորա քան զայլ մարմնո-
ցըն. ըստ այնմ ԹԷ ”գեղեցիկ է նա
տեսլեամբ քան զամենայն որդիս մարդ-
կան”. ԹԷպէտ ըստ աստուածՀոգեԹեան
անտես և անհասագոյն, և ըստ մարմնա-
զգեցուԹեան անշուք և անփառ յերկ-
րի շրջելոյն, ”ուր տեղի ոչ ունէր իջե-
ւանի”. և ոչ փառք և փարԹամուԹիւն
անոտի։ Ա՛նագամայն և ի չարչարանս
խաչին խոնարհեալ, անդ եղև անարգ.
զնմանէ ասէր սոյն Նասայիաս, տեսաք
մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ
գեղեցկուԹիւն։ Նարձեալ ծաղիկ
զնորին անտեսուԹիւնն վերագոչելով
տեսանողացն՝ աւրինակաւ զբարձրագոյնս
տայ մեզ իմանալ։ Ո՛չ ըստ ոյուՀՀա-
ղիկք սկզբունք և նախաշաւիղք են պըտ-
ղոյն երևման և կատարելուԹեան, այս-
պէս և փրկանն Ա՛ստուծոյ յայտնու-
ԹիւնՀ. նախ ծաղկեցաւ անախտաբար ’ի
կուսական արգանդէ, և ապա յետ կեն-
դանարար իւրոյ մկրտուԹեանն պտղա-
բերեաց ’ի մեզ զնշանս և զվարդապե-
տուԹիւնն ’ի փրկուԹիւն Հոգւոց մեր
և մարմնոց. և այս սկիզբն պտղոյն։ Նսկ
յորժամ բարձրացաւ ’ի փայտ խաչին
ողկոյզն աւրհնուԹեան, յայժամ ծաղ-
կեցոյց յանդամս իւր ’ի մեզ զպարգևս
Հոգւոյն. զի մինչև ցայն վայր չև ևս էր
տուեալ զՀոգի. քանզի Յիսուս չև էր
փառաւորեալ խաչիւն. պտղաբերեալ
’ի գերեզմանէն և յետ յարուԹեանն ա-
սէ, ”Տուաւ ինձ ամենայն իշխանուԹիւն
յերկինս և յերկրի”. և յանուն Յի-
սուսի Ա՛ստուծոյ ամենայն ծունր կրկն-
նեսցի։ Ա՛յսպէս և մեք անդամք գո-
լով նմա, ըստ գլխոյն մերոյ պատշաճի
և յարմարուԹեան իմանամք զմեզ մեր-
ձեցեալ առնա։ Որչափ եմք ’ի կենցաղս
յայս ոչ իբրու ԹԷ արդէն առեալ եմք
զնաստացեալն մեզ զբարուԹիւն և կամ
հասեալ իցեմք ’ի նոյն այժմ արդեամբք,
այլ յուսով և հաւատով զՀոգւոյն շը-
նորհ և զորդեգրուԹեան պայման առ
հաւատեայ ընկալեալ, ծաղկեալք ա-
տանաւր՝ բարեպաշտուԹեան հաւատով
և արդարուԹեան գործով. ընդ նմին
ընդ գլխոյն մեր յարուցեալքս, ընդ նը-
մին և նստցուք յերկնաւոր փառսն, ան
դանաւր շահելով զծաղկիս այսորիկ
զպտղաբերուԹիւն։ Ո՛չ զոր գլուխն
մեր յետ իւրոյ յարուԹեանն, զնոյն և
մեք՝ յետ մերն յարուԹեանն ժառան-
գելեմք զպատիւ և զվառս անվախճանս։
Ո՛չ յաղագս այսորիկ Նա մեզ առաջին
պտուղ կոչեցաւ։ Նանզի յողկոյզ մի
նին պտուղ խայծեալ, հաւաստուԹիւն

Հայց միտ դի՛ր ասացեալին՝ թէ հանգիպիցէ՞ և ի վերայ նորա Հոգի Սուրբ, ՚Ո ըստ տնաբերէնութեանն մերում հաճ լինելն Հաւր Սուրբ յայտ առնէ որպէս և առաջ ասաց թէ, ''դա՛ւ որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ''. քանզի Յանն մարդ եղեալ՝ գերազնագոյն ի բնաւորականն մարդկութեան երևեալ գտաւ հանգիստ Հոգւոյն սրբոյ: Այս ևս յաղագս մեզ աւրինադրութեանն, որք պարտիմք այնպէս գնալ որպէս նայն գնաց, և Քրիստոսի գլխոյն մերոյ անդամք յաւդեալ և պատշաճեալ քրիստոսեանքս պարտիմք ի խաչ հանել կրեաց և ցանկութեան աշխարհի. և այն Հաւր՝ նորա բնութենակից և Հակից է: քանզի և իւր իսկ Հոգին, որպէս և ասէր, ''յիմմէ առնու առնուցու և պատմեսցէ ձեզ''. և թէ ''երթամ և առաքեմ զնա'': Այս պատճառ թէ ''որ զիս տեսանէ զՔրիստոս ոչ տեսանէ, սա չէ՛ նորա,'' և թէ ''առաքեաց զՀոգի որդւոյ իւրոյ'' ի սիրտս մեր: Այս պետրոս ասէ, թէ ''մարգարէքն խաւսեցան յորոմ և որպիսի ժամանակի ազդէր ի նոսա Հոգին Քրիստոսի'': Այսոցիկ և Յովհաննէս ասաց, թէ ''ոչ թէ չափով տայ Հայր Որդւոյ զՀոգին, զի ոչ տայ և ոչ չափէ. քանզի նմին իսկ է'': Այսոցիկ որպէս զանձն իւր եդ ի վերայ խաչանցն, նոյնպէս և զՀոգին զիւր բնակից եդ ի կենդանարութիւն մեռելոցն աշխարհի, կամաւք Հաւր և նորին իսկ Հոգւոյն սրբոյ:

Այսոցիկ ասացելոցն՝ թէ հանգիցէ՞ և ի վերայ նորա Հոգի Սուրբ, ՚Ո ըստ տնաբերէնութեանն մերում հաճ լինելն Հաւր Սուրբ յայտ առնէ որպէս և առաջ ասաց թէ, ''դա՛ւ որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ''. քանզի Յանն մարդ եղեալ՝ գերազնագոյն ի բնաւորականն մարդկութեան երևեալ գտաւ հանգիստ Հոգւոյն սրբոյ: Այս ևս յաղագս մեզ աւրինադրութեանն, որք պարտիմք այնպէս գնալ որպէս նայն գնաց, և Քրիստոսի գլխոյն մերոյ անդամք յաւդեալ և պատշաճեալ քրիստոսեանքս պարտիմք ի խաչ հանել կրեաց և ցանկութեան աշխարհի. և այն

Հաւր՝ նորա բնութենակից և Հակից է: քանզի և իւր իսկ Հոգին, որպէս և ասէր, ''յիմմէ առնու առնուցու և պատմեսցէ ձեզ''. և թէ ''երթամ և առաքեմ զնա'': Այս պատճառ թէ ''որ զիս տեսանէ զՔրիստոս ոչ տեսանէ, սա չէ՛ նորա,'' և թէ ''առաքեաց զՀոգի որդւոյ իւրոյ'' ի սիրտս մեր: Այս պետրոս ասէ, թէ ''մարգարէքն խաւսեցան յորոմ և որպիսի ժամանակի ազդէր ի նոսա Հոգին Քրիստոսի'': Այսոցիկ և Յովհաննէս ասաց, թէ ''ոչ թէ չափով տայ Հայր Որդւոյ զՀոգին, զի ոչ տայ և ոչ չափէ. քանզի նմին իսկ է'': Այսոցիկ որպէս զանձն իւր եդ ի վերայ խաչանցն, նոյնպէս և զՀոգին զիւր բնակից եդ ի կենդանարութիւն մեռելոցն աշխարհի, կամաւք Հաւր և նորին իսկ Հոգւոյն սրբոյ:

Այսոցիկ ասացելոցն՝ թէ հանգիցէ՞ և ի վերայ նորա Հոգի Սուրբ, ՚Ո ըստ տնաբերէնութեանն մերում հաճ լինելն Հաւր Սուրբ յայտ առնէ որպէս և առաջ ասաց թէ, ''դա՛ւ որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ''. քանզի Յանն մարդ եղեալ՝ գերազնագոյն ի բնաւորականն մարդկութեան երևեալ գտաւ հանգիստ Հոգւոյն սրբոյ: Այս ևս յաղագս մեզ աւրինադրութեանն, որք պարտիմք այնպէս գնալ որպէս նայն գնաց, և Քրիստոսի գլխոյն մերոյ անդամք յաւդեալ և պատշաճեալ քրիստոսեանքս պարտիմք ի խաչ հանել կրեաց և ցանկութեան աշխարհի. և այն

և այլոցն՝ ի նոյն մանաւանդ թիւն հատանել. այսպէս և ընդ գլխոյն մեր յարութեան, և մեք ընդ նմին յարուցեալ, և՝ ի վառս նովաւ բարձրացեալ՝ յանճառ կեանս վերագրեալ լինիմք: Այս՝ հանգիցէ՞ ի վերայ նորա Հոգի Սուրբ, ՚Մնչեսցեն հերետիկոսքն, որ առտիճանս իմն մուծանեն՝ զուգահաւասար սուրբ Երրորդութեանն՝ զիւրեն փոքր ասելով քան զՀայր, և զՀոգին նուաստ քան զիւրեն: Այս որս ասելի է, թէ գերեսցուք զիւրեն փոքր քան զՀայր որպէս դուքդ հայհոյէք, Հոգւոյն զի՞նչ կարաւտ էր բանն՝ զորմէ դուք ասէք՝ նուաստ գոլ քան զնա. զի ամենայն նուազ՝ ի լաւ անուն աւրհնեսցի: Այլ վասն մեր միայն ընչական և՝ նիւթական մնրմինն ընդունի Յանն Հաւր զՀոգին՝ զհանճարոյ և զաստուածապաշտութեան, (զի) զինքեամբ մեզ ցուցցէ աւրինակ, թէ մեք եմք կարաւտ այնպիսի պարգեւաց Հոգւոյն Սուրբ, և ոչ նա՝ որ Տէրն է՝ կարաւտ լինէ Հոգի ընդունելով այլ՝ ի նմա երևելով Հոգւոյն՝ մեզ լինելին հաւաստարիմ նորա երախտիքն, զի որպէս մարդն լինելով, ոչ եթէ կարաւտ լինէր և սակս այնորիկ եղև մարդ, այլ զի՝ ի մարդն լինել՝ արասցէ զմարդիկ որդիս Սուրբ Հոգւոյն. նոյնպէս և չընդունել զՀոգին, ոչ եթէ երբեք զկարաւտ ոք ընկալաւ, այլ զի կարաւտացեալ՝ ցեղոյ՝ ինքեամբ բաշխեսցէ զՀոգին: Ո՛չ եթէ աւենայն ինչ Հաւր՝ նորա է որպէս ինքն ասաց, յայտ է՝ թէ Հոգին

և այլոցն՝ ի նոյն մանաւանդ թիւն հատանել. այսպէս և ընդ գլխոյն մեր յարութեան, և մեք ընդ նմին յարուցեալ, և՝ ի վառս նովաւ բարձրացեալ՝ յանճառ կեանս վերագրեալ լինիմք: Այս՝ հանգիցէ՞ ի վերայ նորա Հոգի Սուրբ, ՚Մնչեսցեն հերետիկոսքն, որ առտիճանս իմն մուծանեն՝ զուգահաւասար սուրբ Երրորդութեանն՝ զիւրեն փոքր ասելով քան զՀայր, և զՀոգին նուաստ քան զիւրեն: Այս որս ասելի է, թէ գերեսցուք զիւրեն փոքր քան զՀայր որպէս դուքդ հայհոյէք, Հոգւոյն զի՞նչ կարաւտ էր բանն՝ զորմէ դուք ասէք՝ նուաստ գոլ քան զնա. զի ամենայն նուազ՝ ի լաւ անուն աւրհնեսցի: Այլ վասն մեր միայն ընչական և՝ նիւթական մնրմինն ընդունի Յանն Հաւր զՀոգին՝ զհանճարոյ և զաստուածապաշտութեան, (զի) զինքեամբ մեզ ցուցցէ աւրինակ, թէ մեք եմք կարաւտ այնպիսի պարգեւաց Հոգւոյն Սուրբ, և ոչ նա՝ որ Տէրն է՝ կարաւտ լինէ Հոգի ընդունելով այլ՝ ի նմա երևելով Հոգւոյն՝ մեզ լինելին հաւաստարիմ նորա երախտիքն, զի որպէս մարդն լինելով, ոչ եթէ կարաւտ լինէր և սակս այնորիկ եղև մարդ, այլ զի՝ ի մարդն լինել՝ արասցէ զմարդիկ որդիս Սուրբ Հոգւոյն. նոյնպէս և չընդունել զՀոգին, ոչ եթէ երբեք զկարաւտ ոք ընկալաւ, այլ զի կարաւտացեալ՝ ցեղոյ՝ ինքեամբ բաշխեսցէ զՀոգին: Ո՛չ եթէ աւենայն ինչ Հաւր՝ նորա է որպէս ինքն ասաց, յայտ է՝ թէ Հոգին

պաշտօնեան, և լցեք զնա Հոգի եր-
կեղի Աստուծոյ։ Աստ մարմնաւորու-
թեանն Տեառն մերոյ, իմա և զայս, որ-
պէս ասէր Պաւղոս, թէ "աւծ զքեզ
Աստուած՝ Աստուած քո եղով ուրա-
խութեան առաւել քան զընկերս քո",
այս է քան զամենայն դասս աւծելոցն.
քանզի նոքա ծառայք գոլով՝ մասին իմն
Հոգւոյն ընդունակք եղեն, ոմն իմաս-
տութեան՝ որպէս Բեսեղիէլ և Ողո-
ման. ոմն հանճարոյ՝ որպէս Յուսէփ և
Դանիէլ. ոմն զաւրութեանց՝ որպէս Սամ-
սոն և Գեդէոն և այլքն։ Ամենք խոր-
հրդոյ և գիտութեան՝ որպէս աւետեան
մարգարէքն. և աստուածպաշտութեան՝
որպէս Պաւղոս և Տիմոթէոս և Յովսիա։
Իսկ նա՝ որ աստուած մարդացեալ է,
ըստ տնաւրէնութեան զլրութիւն Հոգ-
ւոյն յինքն նովին ընկալաւ. վասնորոյ ա-
սէ մարգարէս թէ "լցեք զնա Հոգի եր-
կեղի Աստուծոյ"։ Օ՜ի որպէս չէ ոք
բաւական Հաւր, բայց միայն անձն որդ-
ւոյ, և ոչ Որդւոյն, թէ ոչ Հոգւոյն սրբոյ, եթէ ոչ
Որդի՝ որ հակիւ նմին իսկ է։ Նա արդ
եթէ իւր է Հոգին, ընդ՞ր ընտրեաց
նովաւ, եթէ ոչ վասն մեր. զի որ եցոյց
զՀոգին յանձին հանդերձ աւետեան պար-
գեւաբն, յայն սակս եցոյց, զի յեր-
կեղն աստուածպաշտութիւն մերձեցուս-
ցէ զմեզ. զի զանձնէ ոչ երբեք ասաց
թէ "ես երկեայ՝ ի քէնն" այլ թէ "ես
սիրեցի զքեզ"։ քանզի Որդւոյ սէր վա-
յելէ՝ ոչ երկեղ։

պէս արժանաւոր հանգիստ գոանիլ Հո-
գւոյն սրբոյ. զի որպէս մարմին լինելոյն
ոչ միաց Հոգին ի նոսին, այսպէս ընդ
Հոգւոյն մի սբանելոյ և նովաւ կնքելոյն
յաւէտ պարգեւեացի հանգչիլ և մշտնջե-
նաւորել Հոգին առ նոսին, ի գլխոյն
մերմէ ի մեզ հեղեալ և միացեալ։ Նո-
ասելովն թէ "ի վերայ նորա". ցուցա-
նելով թէ՝ ի վերուստ է Հոգին. Հո-
գի իմաստութեան և հանճարոյ, Հոգի
խորհրդոյ և զաւրութեան։ Նա զի՞նչ
պէտք էին իմաստութիւն այնմ՝ որ Հաւր
գոլով իմաստութիւն, և իմաստութիւն
այնու հաւասար արկեալ եղև երկրի, և
իմաստութեանն այնմ ոչ գոյ բաւ։ Նթէ
ոչ զմարմնական տնաւրէնութենէն յայտ
առնէ. ըստ այնմ՝ թէ "Յիսուս աճէր
իմաստութեամբ և շնորհաւք"։ Ընդ որ
ժպիրհ հրեայքն սքանչացեալ ասէին,
"ուստի՞ է այս իմաստութիւն, զի
ուսեալ բնաւ չէիք, և զգիրս ոչ գիտէաք։
Նոյնպէս և հանճար և խորհուրդ առ-
նուլն նմա "որ ... իւր . . խորհուրդ և
հանճար" որպէս ասէ Յովհաննէս, և ընդ
Հաւր միշտ ունէր զայս բնաւորապէս,
մարդկաբար է իմանալ, որ յամենայն
հարցուածս դաւանութեան և քննու-
թիւնս կեղծաւորելոցն, գերագոյն հան-
ճարով զհրէից զպետրան ըմբերանէր։
Նա զառակաւոր և զհանճարեղագոյն
վարդապետութիւնն բարբառէր. իսկ
Հոգի զաւրութեան, զի "դարձաւ Յի-
սուս զաւրութեամբ Հոգւոյն ի Գա-
լիլեա, և առնէր զնշանս և զքանչելի-
սըն"։ Հոգի գիտութեան և աստուած-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ Ց ԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՐԴ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԵԱՑ ՀԵՏ։

(շարունակութիւն տես՝ թիւ Թ. և վերջ)

Ընկերք կենդանին ինչպէս որ մարդ գաղափար ունի իւր կեանքին վերայ, նոյնպէս վերան մահուան պարզ պատկերը կ'կրէ։

Ա՛յս հեռուէն կ'զգայ իւր կեանքին վտանգ սպառնացող կատաղի գազանը, թէև զայն առաջ ամենևին տեսած չէ։ Կամայ երկիւղով մի յափշտակուած վտանգէն կ'փախչի, թէ և իրեն դեռ վտանգ մի պատահած չէ. իսկ վտանգը անցնելուն պէս, իսկոյն ամեն բան կը մոռնայ։ Պառնուկը հանդարտաքայլ կերթայ սպանդանոցը, թէև տեսած է ուրիշ գառնուկներուն մորթուիլը։ Ահաւասիկ չ'վախնար, վասն զի հասկացողութենէն վեր է՝ թէ ի՛նչ է մահը. միայն ցաւը կ'զգայ մորթուելու ատեն և կողկողաձայն մայելը կարծես թէ գթութիւն կաղաչէ։

Ընդունելի և անզգայ է այն մարդը որ իւր անձնական արիւնարբուն շահին համար կ'մեռցնէ այնպիսի կենդանի մը, որ իւր կեանքովը միասին և մահուամբը օգուտ չ'բերէր։ Կենդանին ալ մեզ պէս կ'զգայ ցաւն ու ցնծութիւնը. նա ալ ստեղծուած է այս արագաստաղ կեանքը վայելելու համար։ Ո՞նչ իրաւունք ունինք մեռցընել անշնչացնել այն կենդանին, որ շունչ ու կենդանութիւն ընդունած է աստուածային նախախնամութենէն։

Ո՞նչպէս կ'յանդգնինք դադրեցընել այն կեանքը, որ կարող է ուրիշ հազարաւոր արարածոց շահաւէտ լինել, թէև մեզ ոչ օգտակար է և ոչ վնասակար։

Պարտքը մեզ կպատուիրէ չմեռցընել անվնաս կենդանիները, և գոնէ զանոնք մեռցընելու ատեն որչափ կարելի է՝ շուտով վերջ դնել նոցա չարչարանքին։ Թէև մարդ մի այս ճանաչողութիւնը ունի, և գործով իսկ կը կատարէ, կցուցընէ թէ խելքով նոցանէ վեր է, և փափուկ ու զգայուն սիրտ մի ունի։ Ուստի՝ որչափ կարելի է կանուխ տղայոց հասկացընելու է այս պարտքին անհրաժեշտ հարկաւորութիւնն ու սրբութիւնը. որպէս զի մատղաշ հասակէն սորվելնան տկարը չատել և անզէն եղողին վնասանձնաբար ներել։

Տեղ և անզէն կենդանեաց տանջանքը անգթաբար տեսնել սիրող տղան շուտով կը սորվի ուրիշի արցունք թափելուն վերայ ծնդալ։ Ընդհակառակն զգայուն սիրտը, որ չկրնար անտարբերութեամբ և առանց խղճահարութեան թռչնակի մը, անվնաս որդի մը մահը տեսնել, այնպիսին նաև տրամազգեաց ընկերին կամ բարեկամին չկրնար կարեկցութիւն ցոյց չտալ, և կամ ըստ կարի նորա նեղութիւնները թեթևցընելու ճանապարհ չորոնել։

Հայց մարդուս աւելի մօտ են ընտանի կենդանիները. նոքա կարծես թէ իւր գերդաստանին մէկ մասը կըլաղկացընեն։ Արդն է նոցա բնական պաշտպանն ու խնամակալը, նոքա և նորա օգտին համար կապրին։ Իրենց տէրը նոքա հեռուէն կճանչնան, կսիրեն զինքը, ուրախութիւն ընդառաջ կելնեն, երախտագիտութիւն նշաններով կընդունին նորա ընծան։ Հնութիւնը զրկեր է զանոնք բանակատութենէ. բայց նոքա նշանացի կցուցանեն իրենց սէրը, երախտագիտութիւնը և հնազանդութիւնը։

Արդ պարտական է ամեն բանի մէջ խնամել այն անբան արարածները, որ իրեն ծառայելու համար նախատեսմանված են։ Ահ որ անոնք ալ ուրիշ անտառային և դաշտային կենդանեաց նման ազատ լինէին, կարող էին իրենց մնուդ և ապաստանարան գտնել։

Արդս իւր օգտին համար զրկեց զանոնք ազատութենէ. ուստի և հետևաբար պարտական ըրաւ ինքզինքը հոգալ զանոնք, տալ իրենց այն մնուդը, զոր իրենք ծառայութեան մէջ լինելով կարող չեն գտնելու։

Այս ուրեմն մարդս ամեն բանէ առաջ նոցա հետ սիրով պիտի վարուի, հարկաւոր կերակուրը պիտի տայ, ջրտէ պիտի պահպանէ, նոցա մաքրութեանն ու առողջութեանը վրայ հոգ պիտի տանէ, և կարողութենէ վեր աշխատանք պիտի չընշանակէ։

Ամենայն ազգ, վայրենիներն անգամ ընտանի կենդանիներուն վերայ առանձին հոգ ու խնամք ունին։ Ո՞նչպէս ցաւալի է տեսնել այն քրիստոնեաները, որ անզգայ սրտով կտանջեն իրենց հաւատարիմ օգնականները և կարգէ դուրս խստութեամբ նոցա հետ կվարուին։ Ո՞նչպէս ցաւալի է տեսնել, որ շատերը իրենց կոյր շահին համար՝ կենդանեաց կարողութենէ վեր բաներու զանոնք կգործածեն։ Աստուծոյ Նովսէս մարգարէին Նինա լերան վրայ տուած օրէնքն անգամ կսորվեցնեն որ գթութիւն պէտք է ունենալ կենդանեաց վերայ։ Ասկ եօթն երորդ օրը շաբաթ է Աստուծոյ, կասէ, այն օրը գործ մի՛ գործեր, ո՛չ դու, ո՛չ որդիդ, ո՛չ աղջիկդ, ո՛չ գերիդ, ո՛չ գերիդ կնիկը, ո՛չ կովդ, ո՛չ էշդ, և ո՛չ բոլոր հօտդ, նոյն իսկ տունդ իջևանած հանապարհորդը։

Ահա՛ հետևաբար մեր խնամակալութենէ տակ եղող կենդանեաց վրայ պէտք է գութ ունենալ, բայց պէտք չէ որ կարգէ դուրս լինի այս գութը, զոր միայն մարդ մարդոյ կունենայ։

Աբելոյդ զգացմունքը, չափէ դուրս գութ և սէր կենդանեաց վրայ ունեցող մարդը կ'յայտնէ իւր տկարամիտ լինելը, և կ'ցածցընէ մարդկային արժանաւորութեան գինը, զայն անբան անասնոց նուիրելով։

Ա՛յլ երջապէս չմոռանամք ընել այն բերարութիւնը և ունենալ այն սէրը կենդանեաց վրայ, զոր աստուածային օրէնք կպատուիրեն, չմոռանամք որ ա-

նոնք ալ Աստուածոյ արարածներն են, որ կ՚լսէ նոցա աղաղակն ու բողոքը, կը տեսնէ նոցա քաշած նեղութիւնները, ճշմարտութիւն այն խօսքը թէ. "արդարն ողորմի անասնոյ իւրումն, և չարանալն այն խրատն ու խոստումը թէ՝ "երանի ողորմածաց սրտիւք, զի նոքա ժառանգեսցեն զարքայութիւն երկնից"։

Թարգ. Ս. Մարութեանց

Ս. Էջմիածին

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Յօրագրութեանց Սիւնոդի

Փետր.— Էջմիածնայ գաւառի Գեղարդ գեղջ ծխական Յովհաննես Խաճատրեան, իւր սուրբ կոչման հակառակ ընթացից մէջ գտնուած եւ բանիցս խրատ ու յանդիմանութիւն ընդունած վերջը դարձեալ անուղղայ մնալով իգայրակղութիւն բազմաց, ի վերջոյ խսպառ զրկեցաւ Քահանայական կարգին. եւ հարկատուաց կարգը համարուելոյ ազգաւ Քաղաքական իշխանութեան Յանձնարարութեանը յանձնուեցաւ։

Մարս— Առժ. Սուրիաս վարդապետն Պարզեան, որ Տփխիսայ Կոնսիստորիայի անդամ էր, Ախալցխոյ հաղարին Յաջորդ նշանակեցաւ ի տեղի Սկրտիչ եպիսկոպոսի Բաբամեանց։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ՅԵՐԵՒԱՆ

Հետեւելով ազգ երեւոյթը մեր ընդհանուր Ազգային անկարգ մտքի մտադրութեան մէջ հրապարակին խնդրոյ էր. արդեն մեր ընթերցողաց յայտնի է այն ջանքերը, որ գործադրուեցան հաստատելու մեր մէջ հայկական թատրոն, որ ի վերջոյ ձախողեցաւ։

"Ընդհակառակ փետր. ամսոյ 16, 25 և 28 ին Երեւանայ քաղաքիս Հայոց ջերմեռանդ խումբը հոգացողութեամբ և վերատեսչութեամբ պ. Սողոմոնի Աբրահամեան Պատուելիքեանց Տփխեցւոյ, յօգուտ երկաթ դպրոցաց քաղաքիս երկու անգամ "Շուշանիկ" ողբերգութիւնը (երկրորդը ըստ խնդրանաց և փափաքանաց ժողովրդեան ներկայանալու պատուոյն և համակրութեան արժանացաւ), և միանգամ "Երուանդ Բ. ին Հայոց Անեմական դպրոցի դահլիճի մէջ պատրաստուած թատրական բեմի վրայ առաւել քան զկարծիս՝ յաջող և սրտաշարժ ներկայացոյց։ Զոր նաև պիտի շարունակէ զինի ս. Զատկին վերոյիշեալ նպատակաւ*։

Յիշեալ ներկայացմանց մէջ առաւել աչքոյժ և ըստ արժանւոյն ներկայացուցին իւրեանց դերերը պ. պ. Մինաս վարժապետ Փիլիպպոսեանց, Նահապետ տէր Յովհաննիսեանց և Աբգար Պետրոսեանց, նոյնպէս և համեստ փայլ օրիորդ Աղիսաբեթ Պօղոսեանց, որ առաջինը եղած է Երեւանայ Հայ տիկնոջց և օրիորդաց մէջ թատրոնական բեմի վրայ հանդիսացող, ներկայացնելով "Շուշանիկի" դերը։

Ուստի համայն հանդիսականաց հետ

*) Ըստ այժմեայս երեք անգամի ներկայացմանցը որ գումարեց 600 մանէթի չափ, դրեթէ թատրոնական տեսակ մի եւ այն պարագայից բոլոր ծախքերը վճարեց, զոր ալած էր առանց տակաւին ելեւէջի ի Մկրտիչ Օհանիսեանց։ Եւ յետ այսորիկ ներկայացմանց արդիւնքները պիտի մնան բոլորովին յօգուտ երկաթ դպրոցաց Հայոց քաղաքիս։

Ծ. տօք. Նահապետեան։

մեծաւ ուրախութեամբ կը յայտնեմք մեր շնորհակալութիւնը օրական քաղաքիս ջերմեռանդ Հայ խմբին և ս. Աբամելիքեանցին, նմանպէս և առհասարակ ազգասէր դերատանց և դերասանուհեաց։

Իսկ ես մեծայոյս և ուրախ եմ՝ թէ Արեւան քաղաքիս համայն հայերը այս միջոցաւ ևս ոչ միայն պիտի ծանօթանան Ազգային անցից, այլ և նիւթականապէս օժանդակ պիտի լինին ըստ ազգասիրական զգացմանց՝ Հայոց երկրին դպրոցաց աղատաքայլ զարգացման և յառաջադիմութեան, քարի օրինակ հանդիսանալով մեր Ազգայնոց"։

Արա։ — Ինչպէս որ արդէն Օրագայ Ազգային լրագրաց միջոցաւ տեղեկացած եմք, նմանպէս Վարուց մեր Թղթակիցը կը հաղորդէ մեզ, թէ՝ Ֆռանկաստանի մէջ պապական Հայ կղերը մեծ ճիգով և վերջին ջանով կը ռնի Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ առ պաշտօնեայս՝ Ազգիս եպիսկոպոսունս՝ Արեւիկոպոսունս և Վարդապետս ևս առ իշխանազունն աշխարհականս անգամ ս. Պապին հրաւիրագրին օրինակները առանձին առանձին գրութեանց մէջ ներփակեալ յղելով, գրաւել զնոսա. որպէս զի ներկայ տարւոյ դեկտեմբերին մէջ Հռոմ գումարուելիք Ժողովքին երթալու բացատրեսցին։

Այսպիսի մի գրութիւն հանդերձ օրինակաւ հրաւիրագրի Պապին։ Նաև առ շնորհալի Արքիգորիս վարդապետ՝ Վարդապետ Ազաջնորդն ուղղած լինելով՝ ի կողմանէ Ազգ. վարչին Արժանապատուութիւնը զարժանին պատասխանը չգալացած լինելով, օրինակները մեզ խրկած է մեր թղթակիցը, զորս կը հրատարակեմք։

Այս առթիւ աւելորդ է ասել, որ պապական կղերաց այսպիսի գործ ջանից և տքնութեանց արդիւնքը՝ ուրիշ ոչինչ անհնար է ծնանիլ, բայց եթէ՝ մի և նոյն Հայրենեաց որգւոց՝ արեւնակից եղբարց, Հայ Ազգի մէջ հերձուած և անջատեալ մասանց աւելքը փոխանակ բնաջինջ քառնալոյ և կրկին ազգային ոգւով՝ ի մի սիրտ և՝ ի մի սեր միացնելոյ, ընդ հակառակն՝ առաւել ևս տզբալի գժտութեանց և անհմտաբանութեան ապարէդ բանալ։ Օ՜ր չեմք կարող առանց մեծ և խորին ցաւ ու կսկիծ զգալոյ՝ ի սիրտ և՝ ի հոգի՝ նկատել այսպիսի գործ և ընդունայն աշխատութիւնքը։

Ա՛ն զի մեք կ՚ըղճանամք և ակնդետ կ՚սպասեմք, որ մեր սիրելի ազգայինքը՝ պապական Հայ կղերը և Հայրենասէր ժողովուրդը՝ մոռանալով ինչ որ ցարդ ժամանակի դառն բերմունքներէ պատահած ու անցած են, և գիտնալով որ անհետացած են այնպիսի գարերն ևս, և ազգային ոգւով զգալով միասը՝ զգուշանան ինքեանց, որ օտարութեան վարսխը ընթանալով, ոչ՝ կը հեռանան Հայաստանեայց Առաքելական ս. Եկե-

ղեցւոյ և Ս. Ջգի նախկի սրբազան Հարց և բարեխոսանձ ու պանծալի քաջարանց շափղներէ՝ ի կարօտս անուան Հայ Ազգութեան։

Պատճէն նամակի Արդուինոյ Եպիսկոպոսին Հայ Հռոմէականաց.

Վերապատիւ Տեառնդ Խնդալ.

Ո՞Հռոմէական սրբազան գործոյն՝ի գործ դնել կամեցեալ մեր, ձեռնամուխ լինիմք փանաքի գրութեամբս, իրազեկ առնել Վերապատիւ Տեառնդ զսիրատեղչ հրաբերն Սրբազան Պահանջապետին մերոյ Պիոսի ԺԹ-որդւոյ, ի տիե՞զերական յընդհանուր ժողովն. զորս ունի գումարել ի Հռոմ յամի հազարուրթ հարիւր վաթսուն ինն երորդի. և յինն յամենան դեկտեմբերի, որպէս և ծանուցանէ յիւր հրաբերական տետրակն։

Ընդ նոյն ինքն ծայրագոյն Պահանջապետիս կամելով տալ զհրաբերն և միանգամայն սփռել զհրաբերական տետրակն ընդ ամենայն քրիստոնեայ եպիսկոպոսունս և առաջնորդս, մեզ պատուհար հրամանի տուեալ է՝ի դիմաց իւրոյ Ս. Եհափառութեան՝ զի ընծայեսցուք իւրաքանչիւր Եպիսկոպոսաց և Առաջնորդաց, և իշխանապաշն աշխարհականաց անգամ, որք գտանին մերոյ Թեմական վիճակին, թէ համազգի էցեն և թէ օտարազգի։ Ընդ և մեք փութամբ զնորայն պատուէրն կատարել, առ Վերապատութիւնդ առաքելով զնորին ծայրագոյն Պահանջապետին զթուղթն հրաբերանաց՝ զիտալերէնն և զնորին հայ բարգման թարգմանութիւն՝ի հայ բարբառ։

Պատասխանի դարձի պատասխանին ՃՃամք սիրով Վերապատութեանդ

յս. ծ. Ս. վ. Հայաճեան Եպիսկ.
29 յունվ. 1869 Արդվնոյ եւ այլն
Հեպիսկոպոսարանէս։

Պատճէն պատասխանւոյ Առաջնորդին Կարուց առ Գերապայծառն Արդվնոյ.

Վերապայծառ Տեառնդ Խնդալ՝ի Տէր.

Ընդ յս օրերուս մեր անուան ուղղուած հասցէիւ նամակ մը առինք, և ինչպէս տեղէ մը եկած նամակը տեր երկրը կը բանայ, այնպէս ալ մենք առանց ուսկից կամ ինչ ըլլալը գիտնալու բացինք. բայց երբ տեսանք որ Ձեր Վերապայծառութեան ստորագրեալ յատուկ մեկ նամակաբեր Հռոմի ժողովին հրաբերանաց հայերէն և իտալերէն տետրակներն էին, և Ձեր երէնին վրայի մակագիրը ,,Ընդ ամենայն Եպիսկոպոսունս արևելաձիս եկեղեցեաց որք Ընդ աքելապետական Ընթոռոյն հետ հաղորդակցութիւն չունին,, էր գրուած. այս օրինակ հրաբեր մը շարժեց մեր զարմանքը երիւք աւելի. զի նախ Եպիսկոպոսացն պատկառելի Ընտանին վիճակաւորելոց ընդունուն մեզ վերաբերութիւն չունէր. երկրորդ հաղորդակցութիւն չունենալնիս յայտնի

մեզմէ, զորս ծանուցանել պարտք ինձ համարեցաւ։ Ուստի Ձերոյդ Գերապայծառութեան բարեացակամ։

18 փետր. 1869 Գ. Վ. Առաջ. վիճակին
Առաջնորդարան Հայոց Կարուց
ի Կարս։

ՊԱՏՃԷՆ ՀՐԱՒԻՐԱԳՐԻ

Սրբազան Տեառն Պիոսի Թ. նախախնամութեամբն Աստուծոյ Քահանայապետի Առաքելական բուլլը առ ամենայն Եպիսկոպոսունս Արեւելածոս եկեղեցեաց որք Առաքելապետական Աթոռոյն հետ չունին հաղորդակցութիւն ցուցին։

Ուրեմն Արեւելեան Եկեղեցիներուն ամէն Եպիսկոպոսաց որք Առաքելապետական Աթոռոյն հետ չունին հաղորդակցութիւն։ Պիոս Թ. Քահանայապետ։

Աստուածային նախախնամութեան ծածուկ խորհրդովը առանց մեր կողմանէ արդիւնք մը ունենալու, ելլելով այս բարձր Աթոռը ժառանգ երանելի Առաքեալապետին, որնոր Աստուծմէ երեն արուած առանձնաշնորհութեանը համեմատ՝ հաստատուն և անսասանելի վէմն է, որուն վրայ Քրիստոս իր եկեղեցին շինեց (տուրբ Դրիգոր Նիւսացի. ք. ներբոզ նախավկային. ի Գալատ. գ. 500)։ Ուստի երբ վրայ դրուած բեռը կը սոսկալ զմեզ, որ աշխարքիս ամէն կողմն եղած քրիստոնէից վրայ մեր հանգիստ տածենք ու բողոքով, սրտիս բաղձանք ու ջանանք զամենքն ալ յորդորել ի գրկախառնութիւն Հայրենի սիրոյ։ Ունինք եղած ատեն՝ հակառակ մակագրի տեսրակները մեզ կը հաղորդուէր թերևս Աքաքեցւոյն խօսքին հաստատութիւն է որ կըսէ ,,Քանզի զինչ բաժին կայ լայնն,, Եւ երբորդ՝ մինչեռ բոլոր աշխարհի յայտնեալ ճշմարտութիւն մ'է, որ չեմ կարծեր թէ Հռոմանգլիտացած ըլլայ թէ մեք Հայաստանեայցս Աքաքեցւոյ և ուղղափառ ս. Եկեղեցւոյ պաշտօնեայքս ունինք մեզ Սրբազան Գլուխ մը՝ ու ենք հափառ Հայրապետ մը՝ առանձին Հայոց կաթողիկոս մը, որոյ իրաւասութեան ներքոյ միայն կը գտնուինք՝ հոգևորս, թողութ ասել թէ Օսմանեան հողի վրայ գտնուողներս ունինք նաև Ս. Պօղոսյ Ս. Պատրիարք մը. ուրեմն մեզ անդամ մըս որոշ որոշ հռոմէն ճանչցութիւն առանց մեր Ս. Գլխոյ ճանաչման՝ մեզի պատիւ չբերելէն զատ, մեր ս. Եկեղեցւոյ մէջ ունեցած դասակարգութեանցս ալ ուրիշ կերպարանք մը կուտայ, զոր կը պատկառիմ ասել։ Ուստի քանի որ իմ Սրբազան Գլուխէն՝ այն է Սուրբ Աջմիածնայ ու եհափառ և Սրբազնասուրբ Հայրապետէն չունիմ հրաւէր և հրաման մը, որ՝ի Նորին ու եհափառութենէ միայն կրնան մեզ Հայաստանեայցս Եկեղեցւոյ պաշտօնէից առնուն հրաւէրք և հրամանք՝ի պաշտօնէ ուղղակի, և կամ Նորին ու եհափառութեան հրամանաւ՝ի Սրբազան պատրիարգէն ու Պօղոսյ. և քանի որ Ձեր Գերապայծառութենէն եկածը այսպէս չէր, բնական էր որ ընդունելութիւն չէր կրնար գտնալ

կրնար ալ առանց Սրբ Հոգւին ծանր վտանգի մէջ դնելու, քրիստոնէից մէկ մասին վրայ ալ ըլլայ հոգերնին պակաս ընել, որոնց անունքն ալ Ք.րիստոսի պատ- ւական արեամբը գնուած, ու սուրբ աւազանաւը Տէրունական հօտին մէջ մտած, իրաւունք ունին ամեն խնամք մեզմէ պահանջելու։ Ուրեմն ամենուն փրկուե համար ալ, որոնք որ Ք.րիս- տոս կը ճանչնան ու կը պաշտեն, պար- տական ըլլալով մեր ամեն ջանքն ու մըտ- մտուքը անդադար բանեցնելու, աչք նիս ու հայրենի սրտերնիս կը դարձնենք այն եկեղեցեաց վրայ, որոնք առաջուց զօ- դիս մհաբանութեան այս Ը.նտքելատա- կան աթոռոյն հետ կապուած՝ այնպիսի սրբութեամբ և վաստակօք երկնաւոր վարդապետութեան կը ծաղկէին, պըտ- ղաբերելով առատապէս Ը.ստուծոյ փառ- քը ու հոգւոց փրկութիւնը, իսկ հիմայ խիստ ծանր տրտմութիւն է մեզի, որ ամենէն առաջ բաժանումը երկնքի մէջ ձգուլէ չարաչար հնալքներուն ու նեն- գութեամբը զատուած բաժնուած են Հռոմէական սուրբ եկեղեցւոյ հաղոր- դակցութենէն, որնոր բոլոր աշխարհ տարածուած է։ Ը.սոր համար մեր ծա- րագոյն Ք.ահանայապետութեան սկզբէն՝ ձեզի խաղաղութեան ու սիրոյ խօսքեր ղրկելէ սրտէ գրեցինք *)։ Ը.նթե- պէտ այն մեր խօսքերը իրենց ցանկալի վախճանին չհասան, այսու ամենայնիւ ոչ երբէք եւս կեցանք յուսալէն՝ որ օր մը մեր խոնարհ և սրտեռանդն աղօթքը հաճի լսելու ողորմած ու մարդասէր Խա- ղաղութեան և փրկութեան Տէրը՝ որ աշխարհիս փրկութիւն բերաւ, ու երկըն- քէն ծագելով իրեն հաճոյ ու ընդու- նելի, ամենուն ալ ընդունելի ըլլալու խաղաղութիւնը յայտնի ընելու համար՝ իր ծննդեան առենէն հրեշտակներուն բերնովը աւետեց զայն քարեսիրաց, ու մարդկանց հետ եղած առենն ալ՝ խօս- քով սորվեցուց, օրինակով ալ քարոզեց։ (Ը.րան. Գրիգոր. Թուղթ առ Ա.նքայէտ պալէոլոգ ինքնակալ. ի 27 Հոկ. 1272։)

Հիմայ մեր արգոյ եղբարցը, Հռով- մէական սուրբ Ը.կեղեցւոյ կարդինալ- ներուն խորհրդովը յայտարարութիւն ու հրատէրը որ ըրինք՝ եկած տարուան դեկտեմբերի ութին՝ տէրամայր Ը.ստուա- ծածնայ անարատ յղութեան տօնին օրը սկսուելու Տիեզերական ժողովին ի Հռոմ. նորէն մեր ձայնը կուղերձենք ձեզի, կաղաչենք զձեզ ի բոլոր սրտէ և ի ջօրութենէ մտաց, կը յորդորենք զձեզ ու կը պատուիրենք որ, այս ընդհա- նուր ժողովին բարեհաճիք գալու՝ ինչ- պէս որ ձեր նախնիքը եկան Լ.ուգդունի Ը. ժողովը՝ որնոր բարեյիշատակ մեր նախորդը Ը.րանելին Գրիգոր Ը. գու- մարեց, ու փլորենտեան ժողովը՝ որնոր նմանապէս մեր բարեյիշատակ նախորդը Ը.ւգենիոս Դ. գումարեց, որպէս զի սի- րակցութեան հին կարգերը նորոգուին մէջերնիս, ու մեր հարց աթոռի խաղա-

*) Թուղթ ընծայեր. Վասիլի առ արեւելեայս կայսր Վրի 1848։

ղութիւնը՝ այն երկնային ու փրկաբեր Քրիստոսի պարգեւն որ ժամանակը ցամքեցուց, նորէն ուժ առնէ*)։ Այս երկրաւոր տրամաբանութեան ամպէն ու շատ առեներէ՛ վեր տարաճայնութեան սեւ ու տաղտկալի մշուշէն եաքը՝ ծագի ամենուս ուզած միութեան արշալոյսը**)։

Այս պիտոր ըլլայ ուրախարար պատրաստութիւնը, որով Քրիստոս մեր ամենուս տէրն ու փրկիչը իր ամբիծ ու սիրելի հարսը ուղղափառ Եկեղեցին պիտոր մխիթարէ, ու անոր արցունքները պիտոր սրբէ ու ցամքեցնէ աս տառապանաց առեններէն։ Ինանկ որ՝ ամեն բաժանմունք միջերնիս բոլորովին վերնալով մեր առաջուց տարաճայնութիւնները կատարելապէս միաբանելով օրհնենք՛ ի միասին զԱստուած որ ձեզի մէջերնիս հերձուած ըլլալը, այլ Աքաքեայն բերնովը կը պատուիրէ՝ "զի զնոյն բան ունիցիմք ամենեքեան հաստատեալք՛ ի նոյն միտս և՛ ի նոյն հանճարս", ու միանձնաւոր գոհութիւն ողորմութեանց Հօրը մատուցանեն ամեն իր սրբերը, մանաւանդ նախնի փառաւորեալ Հայք և վարդապետք Արեւելեան Եկեղեցեաց, տեսնելով երկնքէն այս Աքաքեապետական աթոռոյն հետ՝ որ կաթուղիկէ ձշմարտութենն ու միութեան կեդրոնն է՝ նորոգութիւն ու նորէն հաստատելը այն կցորդութեան, որնոր իրենք երկրիս վրայ եղած տեսնին ամեն ջանքով ու անխոնջ աշխատանօք հոգ տանելին տածելու օրէ օր ամրացնելու, թէ վարդապետութեամբ և թէ օրինակաւ։ Հոգին սուրբ սրտերնուն մէջ սիրած ըլլալով Քրիստոսի սէրը՝ որ բաժանման միջնորոմը քակեց, ու իր արեամբը աշխարհքը միաբանեց ու հաշտեցուց, և ուղեց որ իւր աշկերտները մէկ սիրտ ու մէկ հոգի ըլլան. ասանկ աղաւթեց առ Հայր։ "Ոչ վասն նոցա միայն աղաչեմ այլ և վասն ամենայն հաւատացելոց, զի իցեն ի մէնջ ի մի եմք"։

Ի Տպարանն կաթողիկոսարանի Հայոց ուղղափառաց։ Ի պերա ի Գալատայ։

Աչխալքալաք։ — Աչխալքալաքէն կը հաղորդեն մեզ, թէ անցեալ փետր. ամսոյ 27 ին՝ Սրբոց Ա. արդանանց տօնախմբութեան օրը "Հայկական Ընթերցարանէն"*) արգոյ քահանայութեան Տէր Մատթէոս նոս Աշագ քահանային Տէմիրճօղլանց՝ առաւօտուն՝ ի ս. Եկեղեցին հանդիսաւոր ս. Պատարագ մատուցանելով և արժանաւոր պաշտօն կատարելով՝ ի յիշատակ Ազգային քաջ նահատակացն Սրբոց Ա. արդանանց, ապա համայն հոգևորական դասը ուղղակի "Հայկական Ընթեր-

---

*) Սուրբ Բարսեղ Թուղմի Հ. առ Գամանսոս Պապ։

**) Վճիռք Փլորինտեան սուրբ ժողովոյ ի կոնդակի Եւգինեայ "ցնծասցեն"։ Տուեալ ի Հռոմ՝ ի դուռն սրբոյն Պետրոսի յ8 սեպտեմբերի 1868 ամի. ի բան և երրորդ ամի քահանայապետութեան մերոյ։

---

* Տակաւին "Հայկական Ընթերցարանին" վերատեւել որպիսի և իցէ խնդիր և կանոնագրութիւն ներկայացած չէ նորին Վեհափառութեան Ս. կաթողիկոսի ամենայն Հայոց։

ցարանը, կերթան, ուր բացի Ընթերցարանի 35 բաժանորդաց, և Հայոց երևելիք, և ամենք՝ ի գլխաւորացն արհեստաւորաց ներկայ եղած են։

Ուր և՝ ի կողմանէ բաժանորդաց Ընթերցարանին նախաձաշի վայելուչ սեղան մի պատրաստուած լինելով, համայն հանդիսականք՝ պ. Վասպար Շահպարոնեանցի մի գեղեցիկ ճառը մարիկ անելէ զկնի կը հրաւիրուին սեղանը, յորում և պ. Յարութիւն Յարութիւնեանցը մի համառօտ բայց ազդու ուղերձ խօսելով, յետոյ բաժակներ կառաջարկուին ,,կեցցէ,, աղաղակօք, և կը բարեմաղթեն օգոստ. Այսեր կենաց երկարութիւն, և Ազգիս Հայոց լուսաւորութիւն և յառաջադիմութիւն՝ մեծարելով միանգամայն Սրբոց Ս. արդանանց արժանաւոր յիշատակը։

Նամակագիրը Խալքալքի Հայ ժողովրդեան կողմանէ երախտագիտական զգացմամբք մեծ ընդհակալութիւն կը յայտնէ առ Ազգասէր այրն՝ մեծապատիւ պ. Յովհաննեանց, որոյ Ազգասիրական առատաձեռնութենէն արդիւնքը ուրիշ առաւել յարմար միջոցի կը թողուք լրագրոյս միջոցաւ մեր Ազգայնոց հաղորդելու՝ յուրախութիւն և՝ ի մխիթարութիւն։

Այսպէս կը կամիմք նամակը և յիշեալ հանդիսին կարգացուած ճառը և խօսուած ուղերձը հրատարակել, բայց ամսագրոյս թերթերուն անձկութիւնը չ'ներեց։

ՄԱՀՍՏՈՒՄՆԱԿ

Աղաքելական Ս. Ա. Թոռոյս միաբան ծերունի Յովսէփ վարդապետ Ռժըկեան՝ կարճատև հիւանդութեամբ՝ անցեալ մարտ ամսոյ 27 ին ընդ արշալոյս՝ իւր մահկանացու կենաց ընթացքը կնքեց՝ ի հասակի 69 ամաց։ Ե. 28 ին կէսօրեան մօտ՝ հանդիսաւոր յուղարկաւորութեամբ՝ Ս. Ա. Թոռոյս Միաբանից գերեզմանատունը ամփոփեցաւ մարմինը։

Ա՛յս առթիւ սիրելի Ս մեզ յայտնել, որ լուսահոգին իւր քաղցրաբարոյ և խոհեմ վարուք՝ մեր համայն ս. Միաբանութեան սիրալիր համակրութեան և յարգանաց արժանացած էր։

Վրաջհմուտ էր մեր Եկեղեցական շարականաց և ամենայն երգեցողութեանց, և յայսոսիկ կողմանս գտանվող հոգևորական դասուց մէջ առաջնին կը համարուէր։

Մարտ 30՝ դատաւորի կիւրակէին՝ զկնի սրբոյ պատարագի՝ Նորին Ս. Եհտիւրութիւն Ս. Կաթողիկոսը՝ հանգերձ ուխտիւք Ս. Եկեղեցւոյ պաշտօն կատարեց վանի հոգւոյ յիշեալ հանգուցեալին։

Էին — Նախիջևանէն և Աստրախա-
նէն դալրոցաց վերաբերեալ նամակներ
ընդունած եմք. բայց սակայն ներկայ
ամառագրոյս մէջ տեղի չունենալով, մայիս
ամսուան Թողուլ հարկադրեալ եմք։
Նոյնպէս և Ազգային դպրոցաց կա-
նոնադրութիւնը, զոր Ուսումնական
Յանձնաժողովը արդէն աւարտած է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աբարատը ներկայ Թերթիս աւարտելով առաջին Հատոր շրջանը՝ կը վու-
Թայ իւր խորին շնորհակալութիւնը յայտնել համայն բաժանորդաց և միանգա-
մայն խոստովանիլ, որ՝ Թէպէտ նոյն շրջանին մէջ ըստ արժանւոյն վսեմ և կարի
հետաքրքրական նիւթերով չկարողացաւ պահել իւր սիրելի որդւոց աւ բաժա-
նորդաց ակնկալութիւնը, բայց անշուշտ է, Թէ՝ այսպիսի ահամոյ պակասու-
Թեանց պատճառները բազմաց քաջածանօթ լինելով, բոլորովին ներողամտու-
Թենէ չը պիտի զրկի մեզ։

Այն զի ամենայն ձեռնարկութիւնք, ուր և երբ սկզբնաւորին, առանց
շատ կամ սակաւ Թերութեան չունին լինել. և անհնարին է առանց գոնէ մի
քանի ժամանակ շարունակութեան և փորձառութեան՝ իւր կատարելութիւնը ըստ
ամենայնի ստանալ։

Յայտնի բան է, որ տպագրական գեղեցկութեան համար ևս պէտք է Տպա-
րանը ըստ բաւականին ունենայ ներքին պիտոյքը, այս է՝ զարդուց և տառից և
այլոց հարստութիւն, արհեստին համագոյն վարպետները, որք առաջին կարևո-
րութիւնք կը համարին տպագրութեան մաքրութիւնը և գեղեցկութիւնը փայ-
լեցնելու։

Արդ ինքնին կը հետևի, Եթէ Աբարատը ո՛չ միայն փորձառութեան կը կա-
րօտեր իւր նիւթերը պիտանի և բազմահաճոյ ընծայեցընել, այլ և Ա. Թոռոյս
տպարանի վիճակը որ ո՛չ գոհացուցիչ դրութեան մէջ էր՝ ի մասին ամենայն կա-
րևոր պարագայից, ըստ կարելւոյն բարւոքել, և որ առաւել մեծն է, մի ամենաչնչին
պէտքը լրացնելոյ համար, աննամած դժուարութեան կը հանդիպի՝ տեղւոյն դրից
աղագաւ. Ուստեմն բնական էր Թէ՝ իւր նոր շրջանը չէր կարելի անշուշտ ունենալ
ըստ ամենայնի կատարելութիւն։

Ասյց և այնպէս Աբարատայ հարազատ և սիրելի որդւոց Հայրենասէր ու
բարեզգաց մասներողամտութեամբ նկատելով այսպիսի ահամոյ պակասութիւնքը,

չ՚զլացաւ իւր ձեռնտուութիւնը և համակրական սէրը՝ ի քաջալերութիւն և ի յառաջադիմութիւն ձեռնարկեալ նպատակին, զոր յապագային արդիւնաւէտ գործադրման մեծ յուսով։

Լաւ արժան է կարծել, թէ նոքա ո՛չ վրիպեցան իւրեանց ակնկալութենէն. վասն զի Ա. բարատը օր քան զօր մեծ փութով ջանաց իւր պակասութեանց կարեւորները լրացնել, և ընդհանուր Տեառն իւր ձիգը անյաջող չը հանդիսացաւ։ Որով հետև կարողացաւ տպագրութեան արհեստի վերաբերեալ հմուտ վարպետներ ձեռք բերել՝ մի քանի տեսակ նորաձայլ գեղեցիկ տառեր և այլն պատրաստել, և ըստ բաւականին բարեկարգել տպարանը, որով Ա. բարատը կը յուսայ յառաջիկայ երկրորդ տարին բերկրաւորի շքեղութեամբ երևիլ։ Իսկ բավանգակութեան մասին ևս կը խոստանայ յաւելցնել բանասիրաց հետաքրքրութեան արժանի հնագիտութիւնք, և ժողովրդական հաշակին համաձայն քաղուածներ և այլն, հաղորդելով միանգամայն՝ի Հայաստան և այլ կողմանս աշխարհի եղող սիրելի Ա. զգակցաց վրայ մանրամասն տեղեկութիւնք՝ առանձին սեռութեամբ։ Ասոր իւր անձուկ շրջանը ընդարձակելոյ համար առ այժմ՝ մի թերթ ևս կը յաւելցնէ, ժողանակ 16ի այսու հետև 24 երեսէ բաղկացնելով իւրաքանչիւր ամսատեարը։

Ա. բարատը կը կնքէ իւր խօսքը՝ յուսալով անշուշտ, թէ՝ ինչպէս ինքն իւր պարտաւորութիւնը կատարել կը ջանայ, նոյնպէս իւր սիրելի որդիքն ևս ըստ իւրեանց անհրաժեշտ պարտաւորութեանց՝ նպաստել չը պիտի խնայեն։

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է ի Ռուսաստան 4 ռուբլի
ի Տաճկաստան 3 արծաթ մեծ.
ի Պարսկաստան 5 ռուբլի
ի Հնդկաստան 6 ,,

ԻՍԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՔՆ ԵՆ

ի Ռուսաստան՝ Առ գերապատիւ Առաջնորդս վեց վիճակաց եւ ի Հ. Կառավարութիւնս բեմից նուագին։—ի Տաճկաստան՝ ի Պատրիարգարան Հայոց Կոստանդնուպոլսոյ եւ առ ամենայն գերապատիւ Առաջնորդս վիճակաց.—նոյնպես ի Պարսկաստան եւ ի Հնդկաստան.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ· Աւելորդ չեմք համարիր ծանուցանել զայս եւս, Թէ Սինօդէն յանձնուած ցուցակայ համեմատ, ինչպէս Ա.րարատայ միջոցաւ կը հրատարակեմք, Տմբագրութիւնը համայն բաժանորդաց ուղարկած է իւրեանց բաժինները. ուստի եթէ կան բաժանորդք տակաւին իւրեանց բաժինները ամբողջութեամբ չտուացած, Թող սուրհանդակատանց եւ առաւելապէս կօնսիստորիայից մէջ փնտռեն. կան մի քանի անծինք եւս, զորս սուրհանդակատուները չկարողանալով դտանել, ինչպէս ի վլադիկովկաս, յետս դարձուցած են։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ